ՎԱՀՐԱՄ ԱՍԱՏՐՅԱՆ
Տնտեսագիտություն, մագիստրատուրա, 2-րդ կուրս

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Հիմնաբառեր. *բնակչություն, կենսամակարդակ, դրամական եկամուտներ, աղքատություն, աշխատավարձ, պետական նպաստներ*

Հոդվածում ուսումնասիրվել ու վերլուծվել են ՀՀ տնային տնտեսությունների դրամական եկամուտները և դրանց ձևավորման աղբյուրները, անդրադարձ է կատարվել բնակչության եկամուտների անհավասարության, աղքատ բնակչության տնտեսապես ակտիվության խնդիրներին, աղքատության պարենային և ընդհանուր գծերին, Ջինիի գործակցին, ինչպես նաև առաջարկվել են միջոցառումներ, որոնք կմեղմեն եկամուտների անհավասարության դրսևորումները ՀՀ-ում:

ՀՀ մարզերի և Երևան քաղաքի բնակչության եկամուտների կառուցվածքային փոփոխությունների գնահատումն իրականացվել է կառուցվածքային շեղումների ինտեգրալ գործակցի միջոցով:

Ներածություն: Արդի պայմաններում ամեն մի սոցիալական պետության գերխնդիրն է բարձրացնել քաղաքացիների կենսամակարդակը և կյանքի որակը, վարել այնպիսի սոցիալական քաղաքականություն, որը կապահովի բնակչության եկամուտների արդար բաշխում, ինչն էլ, իր հերթին, թույլ կտա երաշխավորել յուրաքանչյուր քաղաքացու արժանավայել կյանքը:

Վերջին տասնամյակներում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական և քաղաքական գործընթացներն իրենց ազդեցությունն են թողնում բնակչության կենսամակարդակի և այն բնութագրող ցուցանիշների վրա:

Երկրի սոցիալ-տնտեսական քաղաքականության կառուցման տեսանկյունից, եկամուտների բաշխման բազմակողմանի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ճիշտ պատկերացում կազմելու բնակչության կենսամակարդակի, առկա սոցիալական անհավասարությունների վերաբերյալ, որի արդյունքում մշակվում են սոցիալական քաղաքականության համապատասխան ուղղությունները:

Եկամուտները, որպես բնակչության կենսամակարդակը բնութագրող կարևորագույն ցուցանիշ, իրենց ազդեցությունն են թողնում պահանջմունքները բավարարելու և աղքատությունը մեղմացնելու գործում:

Մասնագիտական գրականության ակնարկ: Մասնագիտական գրականության մեջ առանձնացվում է բնակչության եկամուտների երկու ձև՝ դրամական և բնաիրային: Եկամուտների բաշխման և ձևավորման խնդիրներն ուսումնասիրելիս, առաջին հերթին, պետք է անդրադառնալ դրամական եկամուտներին:

Համաձայն ամերիկյան տնտեսագետներ Մակկոնելի և Բրյուի մոտեցման՝ բնակչության եկամուտների անհավասարությունը պայմանավորված է.[1]

- ունակությունների տարբերություններով,

[1] Արմենակյան Ռ.Ռ., Բնակչության կենսամակարդակը և սոցիալական քաղաքականությունը, էջ 18, Եր., 2004:

- ուսուցման ու կրթական մակարդակներով,
- մասնագիտական ճաշակով,
- շուկայում ունեցած ազդեցությամբ,
- անձի հաջողություններով, անհաջողություններով, կապերով և այլն:

Ջոն Հիքսի սահմանման համաձայն՝ եկամուտն այն առավելագույն գումարն է, որը կարող է ծախսվել որոշակի ժամանակահատվածում, այն հաշվարկով, որ ներդրված կապիտալն ապագայում ևս պահպանի իր մեծությունը (դրամական արտահայտությամբ)[1]:

Նիկոլաս Բարը «եկամտի դասական սահմանումը» ներկայացրել է հետևյալ կերպ. «Եկամուտը կարող է սահմանվել որպես սպառման ժամանակ օգտագործվող իրավունքների շուկայական արժեքի և գույքային իրավունքների պահպանության արժեքի գումար»[2]:

Բնակչության եկամուտները կարելի է դիտարկել որպես հասարակության կողմից ստեղծված ՀՆԱ այն մասը, որը ստացվում է տնտեսության մեջ յուրաքանչյուրի մասնակցության չափից[3]:

Այսպիսով՝ կարող ենք նշել, որ բնակչության տարբեր խավերի միջև եկամուտների անհավասարաչափ բաշխումը հասարակության սոցիալական անկայունության հիմնական պատճառներից մեկն է:

Հետազոտության մեթոդաբանություն: ՀՀ բնակչության եկամուտների անհավասարության դրսևորումները ուսումնասիրելու նպատակով օգտագործել ենք երկրորդային տվյալներ: Հետազոտության ընթացքում կիրառվել են վերլուծության, համադրման, խմբավորման և համեմատությունների մեթոդներ: Տնային տնտեսությունների եկամուտների աղբյուրները բացահայտելու համար ուսումնասիրել ենք ՀՀ մարզերում և Երևան քաղաքում 1 շնչի հաշվով ստացված միջին ամսական եկամուտները, ինչպես նաև հաշվարկել ենք Գատևի գործակիցը:

Հետազոտության արդյունքներ և քննարկում: ՀՀ մարզերի բնակչության եկամուտների կառուցվածքի ուսումնասիրության համար հաշվարկել ենք Գատևի գործակիցը, որը կոչվում է կառուցվածքային շեղումների ինտեգրալ գործակից և բերված է ստորև.

$$K = \sqrt{\frac{\sum_{i=1}^{n}(W_1 - W_0)^2}{\sum_{i=1}^{n}(W_1^2 + W_0^2)}},$$

որտեղ W_0-ն և W_1-ն բազիսային և հաշվետու ժամանակաշրջաններում կառուցվածքային փոփոխությունների արժեքներն են տոկոսային արտահայտությամբ:

$0 \le K \le 1$, որքան K-ն մոտ է 0-ին, այնքան կառուցվածքային փոփոխություններն աննշան են, իսկ եթե կառուցվածքային փոփոխությունները մոտ են 1-ին, ապա դա նշանակում է, որ կառուցվածքային փոփոխությունները կարող են ազդել ինչ-որ գործոնների փոփոխության վրա[4]:

---

[1] «Oxbridge Notes», 2016:

[2] Բար Ն., Չափումների խնդիրները և սահմանումը: Պետության բարօրությունը տնտեսության մեջ, 2004, էջ 121-124:

[3] Մարկոսյան Մ., Բնակչության դրամական եկամուտների ձևավորման և բաշխման հիմնախնդիրները ՀՀ-ում, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ. 2008, էջ 131:

[4] Актуальные вопросы экономики и управления, Экономический анализ-влияние стабильности оборотных активов на платежеспособность организации, с. 205, М., 2011.

2015-2017 թթ. ընթացքում տնային տնտեսությունների դրամական եկամուտների աղբյուրները բացահայտելու համար ուսումնասիրել ենք ՀՀ մարզերում և Երևան քաղաքում 1 շնչի հաշվով ստացված միջին ամսական եկամուտները (տե՛ս հավելված 1)[1]:

Բնակչության եկամուտների կառուցվածքային փոփոխությունները գնահատվել են ըստ Երևանի և ՀՀ մարզերի: Համապատասխան ցուցանիշները ներկայացված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

Երևանի և ՀՀ մարզերի բնակչության եկամուտների կառուցվածքային փոփոխությունների ինտեգրալ ցուցանիշները[2]

	2016 թ. ցուցանիշը 2015 թ. համեմատ	*2017 թ. ցուցանիշը 2016 թ. համեմատ*	*2017 թ. ցուցանիշը 2015 թ. համեմատ*
Երևան	0,031	0,024	0,011
Արագածոտն	0,212	0,180	0,048
Արարատ	0,107	0,057	0,075
Արմավիր	0,010	0,041	0,074
Գեղարքունիք	0,161	0,217	0,080
Լոռի	0,039	0,111	0,097
Կոտայք	0,027	0,009	0,025
Շիրակ	0,010	0,035	0,061
Սյունիք	0,046	0,028	0,111
Վայոց Ձոր	0,102	0,014	0,152
Տավուշ	0,061	0,009	0,076

Հետազոտության արդյունքում պարզվել է, որ մեր կողմից ուսումնասիրված մարզերում և քաղաք Երևանում Գատևի գործակիցը տատանվում է 0.01-ի և 0.2-ի միջև, այսինքն՝ եկամուտների կառուցվածքը, ըստ էության, հետազոտված ժամանակահատվածում չի փոփոխվել:

ՀՀ բնակչության դրամական եկամուտներն ուսումնասիրելու համար վերլուծել ենք ընդհանուր եկամտում եկամտի աղբյուրների տեսակարար կշիռները 2015-2017 թթ. ընթացքում (աղյուսակ 2[3]):

Աղյուսակ 2-ի տվյալները ցույց են տալիս, որ 2015-2017 թթ. ընթացքում, ՀՀ մարզերում և Երևան քաղաքում քաղաքացիների դրամական եկամուտներում առավել մեծ տեսակարար կշիռ ունեն վարձու աշխատանքից, պետական թոշակներից և նպաստներից ստացվող դրամական եկամուտները: Ուստի դիտարկել ենք նաև միջին ամսական անվանական աշխատավարձը 2001-2018 թթ. ընթացքում (հավելված 2), ինչպես նաև համեմատել 2018 թ. և 2001 թ. միջին ամսական անվանական աշխատավարձի աճի տեմպը (հավելված 3):

---

[1] Համապատասխան պաշտոնական վիճակագրական տվյալների բացակայության պատճառով հնարավոր չի եղել ուսումնասիրել ավելի երկար դինամիկ շարք:

[2] Հաշվարկը կատարել է հեղինակը՝ Գատևի բանաձևի օգնությամբ:

[3] Աղյուսակը կազմել է հեղինակը՝ ՀՀ ՎԿ տվյալների հիման վրա:

Աղյուսակ 2

Դրամական եկամուտների տեսակարար կշիռներն ընդհանուր եկամտում 2015-2017 թթ. ընթացքում

	Վարձու աշխատանք	Ինքնազբաղվածություն	Գյուղմթերքի և կենդանիների վաճառք	Սեփականություն	Պետական թոշակներ և նպաստներ	Տրանսֆերտներ	Այլ եկամուտ
Ք.Երևան	65,6	10,5	0,1	0,4	14,7	6,8	2,0
Արագածոտն	35,0	1,9	21,0	0,3	19,8	21,2	0,8
Արարատ	47,2	12,9	14,1	0,1	15,8	8,0	1,9
Արմավիր	48,6	10,7	12,8	0,0	14,3	9,1	4,5
Գեղարքունիք	32,5	9,7	8,2	0,0	18,2	13,0	18,4
Լոռի	41,9	6,6	3,5	0,0	28,6	12,7	6,6
Կոտայք	57,9	9,8	4,7	0,0	15,6	9,8	2,2
Շիրակ	37,5	5,8	10,0	0,2	26,5	16,3	3,6
Սյունիք	65,1	7,5	7,5	0,1	13,3	6,2	0,3
Վայոց Ձոր	53,8	8,4	4,6	0,0	23,2	7,3	2,7
Տավուշ	49,1	12,1	3,6	0,3	27,7	4,1	3,1

Գծապատկեր 1-ում ներկայացված են 2001-2018 թթ. ընթացքում միջին ամսական անվանական աշխատավարձի աճի տեմպերը[1]:



Գծապատկեր 1. ***Միջին ամսական անվանական աշխատավարձի աճի տեմպերը 2001-2018 թթ.***

Գծապատկեր 1-ից երևում է, որ միջին ամսական անվանական աշխատավարձը 2018 թ.-ին՝ 2017 թվականի համեմատ ունեցել է նվազման միտում մասնավորապես՝ Լոռու (23.4%), Գեղարքունիքի (22.4%) և Տավուշի (19.4%) մարզերում[2]:

Ստացված տվյալները վկայում են, որ 2001-2018 թթ. ընթացքում միջին ամսական անվանական աշխատավարձը բոլոր մարզերում աճել է գրեթե 5.4-9 անգամ, ընդ որում, Սյունիքի մարզում՝ մոտ 9 անգամ (24943 դրամից

[1] Գծապատկերը կառուցել է հեղինակը՝ ՀՀ ՎԿ տվյալների հիման վրա:
[2] http://www.armstat.am/file/article/sv_02_18a_142.pdf

դառնալով 234601 դրամ), Կոտայքի մարզում՝ մոտ 5.4 անգամ (24345 դրամից դառնալով 132657 դրամ), ինչն ամենացածր աճի տեմպն է:

Բնակչության կենսամակարդակի գնահատման կարևոր ցուցանիշ է համարվում տվյալ երկրում աղքատության մակարդակը: Տնային տնտեսությունների դրամական եկամուտներն ուսումնասիրելիս վերլուծել ենք աշխատանքի շուկայում աղքատ բնակչության մասնակցության շարժընթացը 2004-2018 թթ. ընթացքում (հավելված 4):

Աշխատանքի շուկայում աղքատ բնակչության տնտեսապես ակտիվության շարժընթացը ներկայացված է գծապատկեր 2-ի միջոցով:



Գծապատկեր 2. ***Աղքատ բնակչության տնտեսապես ակտիվությունը 2004-2018 թթ.***[1]

Գծապատկերի 2-ից երևում է, որ 2018 թ.-ին աղքատ բնակչության մեջ վարձու աշխատողների տեսակարար կշիռը 2004 թ.-ի համեմատ նվազել է 33.8%.-ով (27.5%-ից դարձել է 18.2%), ինքնազբաղված աղքատ բնակչությանը՝ 40.3%-ով (31%-ից դարձել է 18.5%), իսկ աղքատ գործազուրկներինը՝ 22.7%-ով (45.9%-ից դարձել է 35.5%):

Տնտեսապես ոչ ակտիվ աղքատ բնակչության շարժընթացը 2004-2018 թթ. ներկայացված է գծապատկեր 3-ում:

Գծապատկեր 3-ի տվյալները ցույց են տալիս, որ տնտեսապես ոչ ակտիվ աղքատ բնակչության մեջ 2018 թ.-ին աղքատ կենսաթոշակառուների տեսակարար կշիռը 2004 թ.-ի համեմատ նվազել է 23.8%-ով (33.2%-ից դարձել է 25.3%), իսկ աղքատ ուսանողներինը՝ ավելացել 9.6%-ով (22.8%-ից դարձել է 25%):

[1] Գծապատկերը կառուցել է հեղինակը՝ ՀՀ ՎԿ տվյալների հիման վրա:

Գծապատկեր 3. ***Աղքատ բնակչության տնտեսապես ոչ ակտիվությունը*** *2004-2018* ***թթ.***[1]

Քանի որ բնակչության դրամական եկամուտներում ամենամեծ տեսակարար կշիռն ունեն աշխատավարձն ու սոցիալական տրանսֆերտները, հետևաբար՝ դրանց նվազագույն չափերը համեմատելու համար ուսումնասիրել և վերլուծել ենք նաև ՀՀ-ում ծայրահեղ (պարենային) աղքատության և աղքատության ընդհանուր գծերը: ՀՀ-ում 2001-2018 թթ. ընթացքում աղքատության գծերը ներկայացված են գծապատկեր 4-ում:

Գծապատկեր 4. ***ՀՀ-ում աղքատության գծերը*** *2001-2018* ***թթ. ընթացքում***[2]

Գծապատկեր 4-ից երևում է, որ ծայրահեղ աղքատության և աղքատության ընդհանուր գծերը վերջին տարիներին աճել են: 2018 թ.-ի տվյալներով ծայրահեղ աղքատության գիծը կազմել է 24827 դրամ, իսկ նվազագույն կենսաթոշակի և նպաստի չափը՝ 16000 դրամ: Այսինքն՝ 2018 թ.-ին պետության սահմանած նվազագույն սոցիալական տրանսֆերտների մեծությունը չէր հատում անգամ պարենային աղքատության գիծը[3]: Միայն սկսած 2019 թ.-ից՝ սոցիալական տրանսֆերտների նվազագույն չափերը հավասարվեցին պարենային աղքատության գծին[4]:

---

[1] Գծապատկերը կառուցել է հեղինակը՝ ՀՀ ՎԿ տվյալների հիման վրա:
[2] https://www.armstat.am/file/doc/99516748.pdf
[3] https://www.armstat.am/file/doc/99516748.pdf, էջ 108, 118:
[4] http://www.mlsa.am/?p=21591

Բնակչության եկամուտների անհավասարության դրսևորումները վերլուծելիս ուսումնասիրել ենք նաև եկամուտների կենտրոնացման գործակիցը, որը հայտնի է նաև Ջինիի գործակից անվանմամբ:

ՀՀ-ում եկամուտների կենտրոնացման գործակիցը 2001-2018 թթ. ընթացքում ներկայացված է գծապատկեր 5-ի միջոցով:



Գծապատկեր 5. ***Ջինիի ինդեքսը*** *2001-2018* ***թթ. ընթացքում***[1]

Գծապատկեր 5-ի տվյալներից պարզ է դառնում, որ վերջին 8 տարիների ընթացքում Ջինիի գործակիցը գրեթե աննշան է փոխվել: 2018 թ.-ին այն կազմել է 0.360: Վերջինս ցույց է տալիս, որ ՀՀ-ում բնակչության բևեռացումն ըստ եկամուտների ավելի խորն է: Հարկ է նշել, որ զարգացած երկրներում Ջինիի գործակիցը տատանվում է 0.15-0.17 միջակայքում:

Եզրակացություն: Եկամուտների անհավասարության և աղքատության երևույթները գոյություն ունեն աշխարհի գրեթե բոլոր երկրներում՝ անկախ համաշխարհային տնտեսությունում գրաված դիրքից: Յուրաքանչյուր պետություն, այդ թվում՝ նաև ՀՀ-ը պետք է իր որդեգրած քաղաքականությամբ գտնի արդյունավետ և արդարացի լուծումներ վերոնշյալ հիմնախնդիրների ուղղությամբ:

Պետական սոցիալական տրանսֆերտների՝ կենսաթոշակների ու սոցիալական աջակցության մասնաբաժինն ամբողջական եկամուտների կազմում 2018 թ.-ին կազմել է 19.8%, ինչը 2004 թ.-ի համեմատ աճել է մոտ 7%-ով:

Քանի որ հետազոտությունից պարզ դարձավ, որ ՀՀ-ում նվազել է աղքատ կենսաթոշակառուների թիվը, ապա կարծում ենք, որ կառավարությունը պետք է շարունակաբար բարձրացնի նվազագույն կենսաթոշակի, հիմնական կենսաթոշակի, աշխատանքային ստաժի համար տրվող հավելումների չափերը և ավելի հասցեական դարձնի սոցիալական աջակցության համակարգը:

Հայաստանի Հանրապետության բնակչության կենսամակարդակի բարձրացման համար առաջարկում ենք բնակչության եկամուտների բարելավման հետևյալ հիմնական ուղիները.

- աշխատատեղերի ավելացում և բնակչության զբաղվածության խթանում,
- հարկային համակարգի բարելավում,

[1] Գծապատկերը կառուցել է հեղինակը՝ ՀՀ ՎԿ տվյալների հիման վրա:

- բարձրագույն և միջին մասնագիտական կրթության, ինչպես նաև շարունակական կրթության հասանելիության ապահովում բնակչության տարբեր շերտերի համար:

Այսպիսով՝ կարող ենք ասել, որ բնակչության եկամուտների ձևավորման աղբյուրները տարբեր են՝ վարձու աշխատանքից, ինքնազբաղվածությունից, պետական նպաստներից ստացվող եկամուտներ և այլն, հետևաբար՝ պետությունն իր վարած քաղաքականությամբ, ինչպես նաև քաղաքացիները՝ իրենց ձեռնարկելու, արարելու, աշխատելու պատրաստակամությամբ պետք է ձգտեն համատեղ ուժերով պայքարել աղքատություն կոչվող չարիքի դեմ:

Գրականություն

1. Կիրակոսյան Գ.Ե., Տնտեսագիտության տեսություն, 2009:
2. Բար Ն., Չափումների խնդիրները և սահմանումը: Պետության բարօրությունը տնտեսության մեջ, 2004:
3. Աղքատության պատկերը ՀՀ-ում, ՀՀ ՎԿ, 2008-2018 թթ.:
4. Արմենակյան Ռ.Ռ., Բնակչության կենսամակարդակը և սոցիալական քաղաքականությունը, Եր., 2004, էջ 18:
5. Актуальные вопросы экономики и управления, Экономический анализ-влияние стабильности оборотных активов на платежеспособность организации. М., 2011, с. 205.
6. Oxbridge Notes, 2016.
7. armstat.am
8. https://www.armstat.am/file/doc/99516748.pdf,
9. http://www.mlsa.am/?p=21591

Հավելված 1

Տնային տնտեսությունների դրամական եկամուտների աղբյուրները
2015 թ.-ի դրությամբ

1 շնչի հաշվով միջին ամսական, դրամ

	Ընդամենը՝ դրամական եկամուտներ	Վարձու աշխատանք	Ինքնազբաղվածություն	Գյուղմթերքի և կենդանիների վաճառք	Սեփականություն	Պետական թոշակներ և նպաստներ	Տրանսֆերտներ	Այլ եկամուտ
Ք.Երևան	65868	42405	6954	125	260	10299	4368	1453
Արագածոտն	69656	27206	1440	16578	117	10377	13510	428
Արարատ	48309	24497	6976	4497	0	8160	3187	992
Արմավիր	40344	20163	6400	3092	0	5493	3656	1540
Գեղարքունիք	42205	14272	1974	4563	0	8435	4549	8412
Լոռի	37413	15410	1587	886	0	11171	5486	2873
Կոտայք	47702	27068	4016	2689	0	7860	4613	1456
Շիրակ	38217	13974	1765	4789	157	9498	6203	1831
Սյունիք	72061	49599	4098	4022	187	9523	4567	65
Վայոց Ձոր	43360	20990	4319	2251	0	10100	4523	1177
Տավուշ	38592	19985	4384	884	106	10443	1082	1708

Տնային տնտեսությունների դրամական եկամուտների աղբյուրները
2016 թ.-ի դրությամբ

1 շնչի հաշվով միջին ամսական, դրամ

	Ընդամենը՝ դրամական եկամուտներ	Վարձու աշխատանք	Ինքնազբաղվածություն	Գյուղմթերքի և կենդանիների վաճառք	Սեփականություն	Պետական թոշակներ և նպաստներ	Տրանսֆերտներ	Այլ եկամուտ
Ք.Երևան	74561	50180	7394	0	311	10558	4813	1305
Արագածոտն	56814	16355	658	14120	74	12188	13150	271
Արարատ	56613	24661	6831	10751	100	8578	4445	1246
Արմավիր	40257	19840	3056	5237	0	6380	4119	1625
Գեղարքունիք	49161	13212	8528	1542	0	8283	5602	11995
Լոռի	37595	14649	2506	1355	18	11564	4670	2834
Կոտայք	58217	34300	7644	2347	21	8362	4154	1390
Շիրակ	36245	13437	2132	3588	35	9413	6162	1479
Սյունիք	68574	44199	5939	3845	0	8692	5621	279
Վայոց Ձոր	37973	21253	3118	1020	0	9473	2208	900
Տավուշ	34697	16488	3978	1325	0	10140	1746	1020

Տնային տնտեսությունների դրամական եկամուտների աղբյուրները
2017 թ.-ի դրությամբ

1 շնչի հաշվով միջին ամսական, դրամ

	Ընդամենը՝ դրամական եկամուտներ	Վարձու աշխատանք	Ինքնազբաղվածություն	Գյուղմթերքի և կենդանիների վաճառք	Սեփականություն	Պետական թոշակներ և նպաստներ	Տրանսֆերտներ	Այլ եկամուտ
Ք.Երևան	75436	49103	8296	126	181	10700	5568	1462
Արագածոտն	58043	21628	1365	8345	287	13455	12211	752
Արարատ	54654	25791	6693	7709	14	8427	5166	854
Արմավիր	47040	21888	4136	8280	52	6370	3724	2590
Գեղարքունիք	53429	19637	3791	5757	0	9501	9004	5739
Լոռի	44700	20393	3999	1987	33	11300	4875	2113
Կոտայք	51105	29736	4022	2246	0	8116	6375	610
Շիրակ	36415	14177	2508	2806	33	10461	5690	740
Սյունիք	82784	51293	6657	9400	146	11484	3432	372
Վայոց Ձոր	47570	27155	3318	2846	0	10136	2736	1379
Տավուշ	44029	21193	5875	2074	263	11865	1919	840

Հավելված 2

Միջին ամսական անվանական աշխատավարձը *2001-2018* ***թթ. (դրամ)***

	2001	*2002*	*2003*	*2004*	*2005*	*2006*	*2007*	*2008*	*2009*	*2010*	*2011*	*2012*	*2013*	*2014*	*2015*	*2016*	*2017*	*2018*
Ք.Երևան	29682	31625	39124	49685	57414	69709	83226	99057	107362	114132	119347	154060	160804	166127	180105	189393	194182	194754
Արագածոտն	13553	17813	23157	30188	39295	48192	55223	64993	75956	73127	76230	94895	102191	111702	119174	115549	121975	105562
Արարատ	15726	22147	27742	34614	46945	51084	58573	66141	76363	81768	88056	112117	117551	126262	135560	145431	144605	124633
Արմավիր	22713	24490	29645	36865	50999	59007	66368	77044	87129	94934	95699	121143	126010	136533	145798	150680	149421	128292
Գեղարքունիք	15830	20600	27391	34735	43366	48786	57792	67316	79397	84202	88395	113497	112439	121369	136583	138501	140561	109133
Լոռի	19204	21551	26696	35662	42818	47974	56998	67194	75657	79226	85004	106045	113456	127282	140497	144919	148896	114123
Կոտայք	24345	30918	39221	47198	55053	60897	68939	76611	85604	94797	95682	118316	126488	136343	146077	152886	149867	132657
Շիրակ	15420	18504	23812	33261	41222	45880	55598	65064	74354	77474	81824	103091	104240	115847	124203	128953	127369	107111
Սյունիք	24943	28773	37749	50401	61467	74772	93014	103891	102456	120907	131963	162826	178606	187878	197836	200693	217687	234601
Վայոց Ձոր	15647	16519	23295	31124	40499	47336	55144	67888	72523	75651	76614	99827	105624	117660	127964	132475	131966	118280
Տավուշ	15191	17854	23213	31450	38351	44489	52390	61724	70598	74434	78622	99451	102247	117831	128279	146475	143080	115336

Հավելված 3

Միջին ամսական անվանական աշխատավարձի աճի տեմպը *2001-20018* ***թթ.***

	2002/ 2001	*2003/ 2002*	*2004/ 2003*	*2005/ 2004*	*2006/ 2005*	*2007/ 2006*	*2008/ 2007*	*2009/ 2008*	*2010/ 2009*	*2011/ 2010*	*2012/ 2011*	*2013/ 2012*	*2014/ 2013*	*2015/ 2014*	*2016/ 2015*	*2017/ 2016*	*2018/ 2017*	*2018/ 2001*
Ք.Երևան	6,5	23,7	27,0	15,6	21,4	19,4	19,0	8,4	6,3	4,6	29,1	4,4	3,3	8,4	5,2	-1,0	0,3	656,1
Արագածոտն	31,4	30,0	30,4	30,2	22,6	14,6	17,7	16,9	-3,7	4,2	24,5	7,7	9,3	6,7	-3,0	-9,8	-13,5	778,9
Արարատ	40,8	25,3	24,8	35,6	8,8	14,7	12,9	15,5	7,1	7,7	27,3	4,8	7,4	7,4	7,3	-19,3	-13,8	792,5
Արմավիր	7,8	21,0	24,4	38,3	15,7	12,5	16,1	13,1	9,0	0,8	26,6	4,0	8,4	6,8	3,3	-17,4	-14,1	564,8
Գեղարքունիք	30,1	33,0	26,8	24,8	12,5	18,5	16,5	17,9	6,1	5,0	28,4	-0,9	7,9	12,5	1,4	-19,7	-22,4	689,4
Լոռի	12,2	23,9	33,6	20,1	12,0	18,8	17,9	12,6	4,7	7,3	24,8	7,0	12,2	10,4	3,1	-18,0	-23,4	594,3
Կոտայք	27,0	26,9	20,3	16,6	10,6	13,2	11,1	11,7	10,7	0,9	23,7	6,9	7,8	7,1	4,7	-17,4	-11,5	544,9
Շիրակ	20,0	28,7	39,7	23,9	11,3	21,2	17,0	14,3	4,2	5,6	26,0	1,1	11,1	7,2	3,8	-16,9	-15,9	694,6
Սյունիք	15,4	31,2	33,5	22,0	21,6	24,4	11,7	-1,4	18,0	9,1	23,4	9,7	5,2	5,3	1,4	-0,4	7,8	940,5
Վայոց Ձոր	5,6	41,0	33,6	30,1	16,9	16,5	23,1	6,8	4,3	1,3	30,3	5,8	11,4	8,8	3,5	-17,4	-10,4	755,9
Տավուշ	17,5	30,0	35,5	21,9	16,0	17,8	17,8	14,4	5,4	5,6	26,5	2,8	15,2	8,9	14,2	-21,8	-19,4	759,2

Հավելված 4

Աշխատուժի մասնակցությունն ու աղքատությունը** 2004-2018 **թթ.

	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018
Տնտեսապես ակտիվ	32,6	30	26,7	21,6	23,9	30,1	32,3	31,4	28,5	27,9	26,3	26,4	26,5	23,2	20
Վարձու աշխատող	27,5	22,7	21,3	20	20,7	25,5	28	26,8	23,4	24,4	23,2	22,6	22,5	20,5	18,2
Ինքնազբաղվածներ	31	27,3	23,9	20,8	23,3	29,7	29,8	28,7	28,9	26,7	25,4	23,9	25	22,1	18,5
Գործազուրկներ	45,9	46,9	41,2	29,3	32,6	38,8	43,3	44,1	39,8	39,8	38,1	38,6	41,1	34,7	35,5
Տնտեսապես ոչ ակտիվ	34,8	27,5	24,4	27,2	30,8	37,3	38,7	37,4	36,3	35,3	32,7	33,4	31	28,2	26,6
Կենսաթոշակառուներ	33,2	30	26,5	27,6	34,5	39,9	38,7	35,3	37,5	34,4	35,8	32,7	30,7	26,8	25,3
Ուսանողներ	22,8	14,8	14,8	15,1	22,4	29,5	33	32,5	31,9	29,8	28	33,1	32,7	27,1	25

Հավելված 5

Աղքատության գծերը ՀՀ-ում** 2001-2018 **թթ. (դրամ)

Տարիներ	Ջինիի ինդեքսը
2001	0,535
2002	0,451
2003	0,438
2004	0,395
2005	0,359
2006	0,369
2007	0,371
2008	0,389
2009	0,355
2010	0,362
2011	0,371
2012	0,372
2013	0,372
2014	0,373
2015	0,374
2016	0,375
2017	0,359
2018	0,360

Տարիներ	Ծայրահեղ (պարենային) աղքատության գիծ	Աղքատության ընդհանուր գիծ
2001	10246	16989
2002	10441	17299
2003	11662	18541
2004	12467	19373
2005	13266	20289
2006	14300	21555
2007	15753	23168
2008	17232	25188
2009	17483	30920
2010	19126	35517
2011	21306	36158
2012	21732	37044
2013	22993	39193
2014	23384	40264
2015	24109	41698
2016	23313	40867
2017	24269	41612
2018	24827	42621

Հավելվածները կազմել է հեղինակը՝ ՀՀ ՎԿ տվյալների հիման վրա:

ВАГРАМ АСАТРЯН
Экономика, магистратура, 2-й курс

ПРОЯВЛЕНИЯ НЕРАВЕНСТВА ДЕНЕЖНЫХ ДОХОДОВ НАСЕЛЕНИЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Ключевые слова: *население, уровень жизни, денежные доходы, бедность, заработная плата, государственные пособия*

В статье исследуются и анализируются денежные доходы армянских домохозяйств, источники их формирования, рассматриваются вопросы неравенства доходов населения, экономической активности бедного населения, черты продовольственной и общей бедности и индекса Джини, а также были предложены меры по смягчению проявлений неравенства доходов в Армении.

Оценка структурных изменений доходов населения регионов РА и г.Еревана проводилась с помощью интегрального коэффициента структурных отклонений.

VAHRAM ASATRYAN
2nd Year, Master's Degree, Economics

MANIFESTATIONS OF MONETARY INCOMES INEQUALITY OF THE POPULATION IN THE REPUBLIC OF ARMENIA

Key words: *population, living standards, monetary income, poverty, salary, state benefits*

The paper studies and analyzes the monetary incomes of the RA households, the sources of their formation, touches upon the problems of income inequality of the population, the economic activity of the poor population, the general food poverty lines and Gini's coefficient. The research also offers measures to mitigate the manifestations of income inequality in Armenia.

The assessment of the structural changes in the population incomes of the regions of the Republic of Armenia and Yerevan was carried out using the integral coefficient of structural deviations.